

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	ՋՐԱՌԱՏ
ՄԱՐԶ	ԱՐՄԱՎԻՐ



**1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ**

Ջրի առատության պատճառով գյուղը անվանվել է Ջրառատ: Գյուղի նախկին անունը եղել է Վերին Ղարխուն: Բնակչության մեծ մասը գյուղ է եկել 1918-1919 թթ գաղթից հետո՝ հիմնականում Մոսունից և Մուրմալու գավառներից: 1924-1925 թվերին գալիս են մի քանի տնտեսություն եգիպտեր, որոնք նույնպես գաղթել են Իգդիի շրջանի գյուղերից: Կոլխոզում հիմնականում զբաղվել են հողագործությամբ, ավելի ուշ նաև անասնապահությամբ: Ջարգացած է եղել շերամապահությունը, Ֆերմայի վարիչը եղել է՝ Վազգեն Առաքելյանը, անասնաբույժը՝ Մարտիկ Մարտիրոսյանը: Երկար տարիներ կոլխոզում աշխատանքները կատարվել են պրիմիտիվ գործիքներով՝ գութան, արոք, փոցիս և այլն: Մեխանիզացիան մուտք է գործել ավելի ուշ: Կոլխոզը սկզբնական շրջանում ունեցել է 12 բեռնատար 2 մարդատար ավտոմեքենա, որի վարիչն էր Սերյոժա Հովհաննիսյանը, որը մահացավ աշխատանքի վայրում 1986թ:

1941 թ. Հայրենական Մեծ պատերազմին իր մասնակցությունն է ունենում նաև Ջրառատ գյուղը: Պատերազմ են մեկնել 117 ջրառատցիներ, որոնցից զոհվեցին 44-ը, տուն վերադարձան 73-ը : Հայրենական մեծ պատերազմի զոհերին նվիրված հուշարձանը գյուղում կառուցվել է 1978-80-ական թվականներին, որի նախաձեռնողը եղել են գյուղխորհրդի նախագահ Գագիկ Ավագյանը, Ժորա Ջաքարյանը: Ջրառատ գյուղի աստիճանական զարգացմանը նպաստել է երկաթգիծը, որը շահագործման է հանձնվել դեռևս 1902թ-ին: Այն գործում է մինչև օրս:

1947թ. սկսած գյուղը մեծ զարգացում է ապրել: Անասնաբուժարանի շենքը կառուցվել է 1951թ., գլխավոր բժիշկ է աշխատել Բաղայանը, Գրիգորյան Անդրուշը: 1962թ. կոլխոզի միջոցներոց գյուղում շահագործման է հանձնվել բաղնիքը: Գյուղը էլեկտրաֆիկացվել է : Ողջ գյուղը ունենալով էլեկտրական հոսանք, մուտք է գործել նաև ռադիոն և հեռուստացույցը:

**2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ**

Էջմիածնի շրջանի Ջրառատ /նախկին Վերին -Ղարխուն/ գյուղը գտնվում է Արարատյան դաշտի կենտրոնական մասում, որն ունի կիսաանապատային և անապատային կլիմա, որտեղ տարեկան տեղումների քանակը կազմում է 300-350 մմ: Ջրառատ գյուղը օվկիանոսի մակերևույթից բարձր է 835 մետր:

**Կլիման** - ամռանը նկատվել է սովերում +25 - + 400 , իսկ ձմռանը միջին ջերմաստիճանը տատանվում է -8 - -17 աստիճան:

**Հողերը** - Ջրառատ գյուղի հողերը կավաավազային են, որոնց մեջ հումուսային մասը պարունակում է 2 - 4 %, արհեստական պարարտացման ժամանակ լավ է աճում բուսաբանջարանոցային կուլտուրաներ, այգիներ, և պտղատու ծառեր՝ ծիրանենի, սալորենի, դեղձենի, թթենի, բազենի, տանձենի, ինձորենի, նույնիսկ աճում են մերձարևադարձային բույսերից թուղն ու նուռը: Աճում է խաղողի բազմաթիվ տեսակներ: Կան աղոտ հողակտորներ, որոնց վերափոխման համար կատարվել են բազմաթիվ փորձեր, այդ հողակտորներից մի մասն արդեն օգտագործում են: Ջրառատ գյուղի հարավային մասից երևում է մեծ և փոքր Մասիսները, որոնց բարձրությունը հասնում է 5165 մետրի և ծածկված է հավերժական ձյան շերտով, իսկ հյուսիսային կողմից երևում է քառագագաթ Արագածը, որի բարձրությունը 4095 մետր է և քարե գագթում գտնվում է Քարի լիճը: Մն ջուր գետը հարուստ է ձկներով, որն օգտագործվում է բնակիչների կողմից: Ջրառատ գյուղի հարավային մասում գտնվում է Մստո-ՇԾԿալո հողամասը, որը հարուստ է ավազով, իսկ ավազն օգտագործվել է Հայաստանի տարբեր շրջանների հատկապես երկաթգծի շինարարության համար, բավականին երկար ժամանակ:

**3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	300-350մմ
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (°C)	-8-17°C
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (°C)	25+40°C

**4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից 1.1) 2.5 կմ 1.2)- 1.3)-	
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Ջրառատ
3. Համայնքի հեռավորությունը՝	
3.1) մայրաքաղաքից (կմ)	35 կմ
3.2) մարզկենտրոնից (կմ)	37 կմ
3.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	1.5 կմ
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	12 կմ
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	2.5 կմ
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	0
4. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	835 մ
5. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	1102.0 քմ
6. Սահմանակից համայնքների անվանումները	Մեծամոր, Ապագա, Լուսազյուղ, Արաքս, Ջրարբի
7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	jraratgyux@mail.ru
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	www.jrarat.am
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	077900064
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	0231-66250
11. Համայնքի հեռախոսային կոդը	0231
12. Համայնքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	այո
13. Համայնքապետարանի փոստային դասիչը	1146
14. Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	ոչ
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	այո

**5. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	3181
2. Գրանցված ծնունդների քանակը	22
2. Մահացության դեպքերի քանակը	16
3. Ամուսնությունների քանակը	9
4. Ամուսնալուծությունների քանակը	3
5. Տնային տնտեսությունների թիվը	779
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	57

7. Կենսաթոշակառուների քանակը	298
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	46

**6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

	2018թ.
1. Գրադարանների քանակը	ոչ
2. Արվեստի դպրոցների քանակը	ոչ
3. Երաժշտական դպրոցների քանակը	ոչ
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	այո
5. Հանրակրթական դպրոցների քանակը	այո
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	ոչ
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	ոչ
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	ոչ
9. Մարզադպրոցների քանակը	այո

**7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ**

	2018թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ <sup>2</sup> )	890.720 քմ
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	637
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	799

**8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

	2018թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	691.1
2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	581
3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	1102
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	350
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	69
7. Խոզերի գլխաքանակը	74
8. Գյուղատնտեսական տեխնիկա	21
8.1 տրակտորներ (քանակը)	7
8.2 կոմբայններ (քանակը)	-
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	824

**9. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ**

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	10
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո

3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	այո
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	25 կմ
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	ոչ
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	9
6.2 Էքսկավատորների քանակը	0
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	4
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 քանակը	13
6.6 Աղբատար մեքենաների քանակը	0
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	0
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո

**10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**  
*Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)*

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը եկամուտներ	65687.0	65308.3
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդ թվում՝	9430.9	10073.2
2.1 հողի հարկ	4902.3	3071.6
2.2 գույքահարկ	4528.6	7001.6
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	52.260.3	52284.7
3.1 դոտացիա	52160.3	52160.3
3.2 սուբվենցիա	0	0
4. Մուտքեր հողի օտարումից	100.0	124.4

*Համայնքի վարչական բյուջեի ծախսեր (հազ. դրամ)*

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	65687.0	47760.9

*Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները (հազ. դրամ)*

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ**

	<b>Ընդունված բյուջե</b>	<b>Փաստացի</b>
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	0	0

**Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազ. դրամ)**

	<b>Ընդունված բյուջե</b>	<b>Փաստացի</b>
1. Ընդամենը ծախսեր	9659.4	0

**11. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ**

1. Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից՝	8
1.1 համայնքային ծառայողներ	6
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	19695.0
3. Ավագանու անդամների թվաքանակը	7

**12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

<b>Հիմնախնդիրը</b>	<b>Ակնկալվող լուծումը</b>
Ճանապարհների ասֆալտապատում	գումարներ տնտեսել և սուբվենցիայի ծրագրի ներկայացնել կառավարությանը:
Ոռոգման ջրի խնդրի լուծում	գումարներ տնտեսել և սուբվենցիայի ծրագրի ներկայացնել կառավարությանը: